«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ Գնումների
գործընթացի իրականացման կարգի

# ՀՐԱՎԵՐ

## ԹԻՎ ԱՄՕ-ՁՕՂՆԱ-67/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «ԱՄՕ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Պատվիրատու կամ Ընկերություն)՝ կարիքների համար ՛՛Զվարթնոց՛՛ օդանավակայանի ղեկուղիների (A, B, C, D) ՛՛Կանգ՛՛ համակարգի , լուսատախտակների, առանցքագծերի խրամուղիների և դիտահորերի իրականացման, մալուխատարների անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԱՄՕ-**ՁՕՂՆԱ**-67/26 ծածկագրով անցկացվող մրցույթի հայտարարության

## Բաժին 1. Գնման ենթակա ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվանումը և բնութագրերը

| | |
|---|---|
| Ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվանումը | ՛՛Զվարթնոց՛՛ օդանավակայանի ղեկուղիների (A, B, C, D) ՛՛Կանգ՛՛ համակարգի , լուսատախտակների, առանցքագծերի խրամուղիների և դիտահորերի իրականացում, մալուխատարների անցկացում: |
| **Ապրանքի (աշխատանքի, ծառայության) բնութագրերը, տեխնիկական և այլ հատկանիշները** | ՛՛Զվարթնոց՛՛ օդանավակայանի ղեկուղիների (A, B, C, D) ՛՛Կանգ՛՛ համակարգի , լուսատախտակների, առանցքագծերի խրամուղիների և դիտահորերի իրականացման, մալուխատարների անցկացման ընթացքում նախատեսված են հետևյալ աշխատանքները՝<br>- խրամուղիների իրականացում;<br>- լուսատեխնիկական համակարգի մալուխատար խողովակների տեղադրում, բետոնացում;<br>- ե/բ դիտահորերի և սալերի տեղադրում, համապատասխանացնելով դրանք ԻԿԱՕ 14 հավելվածի 4D դասիչի օդանավերի բեռնվածքներին,<br>- ծածկույթի վերանորոգում, պոլիմեռային հավելանյութերի օգտագործումով;<br>- շին.աղբի տեղափոխում՝ համաձայն ՀՀ գործող կարգի, աղբավայրից համապատասխան թույլտվության տեղեկանքի ներկայացում;<br>- մակնիշավորման իրականացում:<br>Հաղթող ճանաչված մասնակիցը սահմանված ժամկետում, մինչև պայմանագրի կնքումը պետք է ներկայացնի աշխատանքների կատարման նախագիծ (ԱԿՆ-ППР): Աշխատանքների կատարման |

| | |
|---|---|
| | նախագծերը չներկայացնելու դեպքում մասնակիցը կհամարվի չորակավորված:<br>Բոլոր տիպի աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմերի, ԱԿՆ-ում մշակված տեխնոլոգիական քարտեզների և ընթացակարգերի:<br>Աշխատանքների ծավալների ամփոփագիրը և նկարագիրը ներկայացված են հավելված 1-ում: Աշխատանքները իրականացվելու են փուլերով՝ չխոչընդոտելով օդանավակայանի բնականոն աշխատանքին:<br>Մրցույթում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացված բոլոր տվյալները (այդ թվում՝ տեխնիկական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ և այլն) կարող են ստուգվել ԱՄՕ-ի կողմից: Ներկայացված տվյալների և ստուգման արդյունքների միջև անհամապատասխանության դեպքում մասնակիցը կհամարվի չորակավորված:<br>Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի ողջ անձնակազմը օդանավակայանի տարածքում պետք է կրի կազմակերպության տարբերանշանով համապատասխան արտահագուստ (պաշտպանիչ կոշիկներ, լուսանդրադարձնող բաճկոններ, ձեռնոցներ, սաղավարտներ և այլն ) և աշխատանքների կատարման ողջ ընթացքում հետևել օդանավակայանի ներքին կանոնակարգին:<br>Օրվա մութ ժամերին աշխատանքների իրականացումը ԱՐԳԵԼՎՈՒՄ Է:<br>Աշխատանքները իրականացնելուց առաջ Կապալառուն պարտավոր է համապատասխան ձևով սահմանազատի շինարարական հրապարակը՝ տեղադրելով նյու-ջերսի տիպի սպիտակ-կարմիր համադրմամբ արգելապատնեշներ, միմյանց ամրացված՝ ապահովելով անընդհատությունը, կոլլեկտավորված մշտապես վառվող կարմիր լույսերով և ապահովելով թռիչքների անվտանգության անհրաժեշտ մակարդակը, ներառյալ ցածր տեսանելիության ընթացակարգը:<br>Աշխատանքները սկելուց առաջ կապալառուն պարտավոր է ունենալ աշխատաքների իրականացման համար անհրաժեշտ նյութերի 30%-ի չափով պահեստավորված քանակություն:<br>Կապալառուն աշխատանքների իրականացման ընթացքում, պետք է ներկայացնի՝<br>- կատարողական գծագրեր (ծածկույթի շերտեր, ինժեներական կոմունիկացիաներ և այլն);<br>- նյութերի սերտիֆիկատները և որակի անձնագրերը (կատարողական ակտերի հետ);<br>- իր կողմից իրականացված լաբորատոր փորձարկումների արձանագրությունները: |

| | |
|---|---|
| | |

## Բաժին 2. Որակավորման չափանիշները

| Մաս N | Որակավորման չափանիշներ | |
|---|---|---|
| 1 | **Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը** | • Կապիտալ շինարարություն իրականացնող կազմակերպություն:<br>• Մրցույթով նախատեսված աշխատանքների իրականացման համապատասխան լիցենզիա 1-ին դասի և ներդիրներ (04. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ, 09.տրանսպորտային ուղիներ /ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն/):<br><br>*<u>ՆՇՈՒՄ</u>՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), որի դեպքում՝*<br>*- հայտին կցվում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը.*<br>*- հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.*<br>*- մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն*<br>*- համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ* |
| 2 | **Մասնագիտական փորձառություն** | Նմանատիպ աշխատանքների իրականացման ընդհանուր փորձ 01.06.2023-01.06.2026 ընկած ժամանակահատվածում՝<br>• Իրականցված պատվածքների (հիմքի լրացուցիչ շերտ, հիմք, երկշերտ ծածկույթ) աշխատանքներ՝ ոչ պակաս 20000մ2 մակերեսով;<br>• Իրականցված ծածկույթների (վերին շերտ ասֆալտբետոնի Ա տիպի խառնուրդով) աշխատանքներ՝ ոչ պակաս 20000մ2 մակերեսով;<br>• Իրականացված ինժեներական կոմունիկացիաներ (ջրահեռացում կամ ջրամատակարարում կամ էլեկտրամատակարարում խողովակաշարերով)՝ ոչ պակաս 7000գծ.մ:<br>• Հողային աշխատանքների իրականացում՝ 6000մ3, ներառյալ լիցք և հանույթ |

<table>
<tr><td></td><td></td><td>
<ul>
<li>Երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացում՝ 300մ3</li>
<li>Բետոնե աշխատանքներ՝ 1000մ3</li>
<li>Մակնիշավորման կամ գծանշման աշխատանքներ՝ 5000մ2</li>
</ul>
Սույն մասով սահմանված որակավորման չափանիշները հավաստելու նպատակով, Մասնակիցը իր հայտին կից ներկայացնում է վերը նշված դրույթների, աշխատանքների վերաբերյալ ապացույց հանդիսացող հիմնավոր փաստաթղթեր՝ նշված մակերեսների և ծավալների փորձի ապահովմամբ (օր. կատարողական ակտեր):
Ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն հայերեն, այլ լեզուների դեպքում ներկայացվեն հայերեն թարգմանությամբ՝ լիցենզավորված թարգմանչի համապատասխան վավերացմամբ:
<u>ՆՇՈՒՄ</u>՝մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), որի դեպքում՝<br>- հայտին կցվում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը.<br>- հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.<br>- մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն<br>- համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ
</td></tr>
<tr><td>3</td><td>Տեխնիկական միջոցներ</td><td>
Կապալառուն պետք է ապահովված լինի հետևյալ սարքավորումներով և մեխանիզմներով՝
<ul>
<li>ասֆալտբետոնի գործարան, 1 միավոր
<ul>
<li>ոչ պակաս 160տ/ժ արտադրողականությամբ,</li>
<li>արտադրման տարեթիվը, առնվազն 2015թ.,</li>
<li>ամբողջական ավտոմատացված, արտադրության բոլոր փուլերը և հսկվող ցուցանիշները համակարգչի մոնիտորին ցուցադրման հնարավորությամբ,*</li>
<li>ջերմամեկուսիչ կուտակային բունկերով 30տ տարողությամբ,*</li>
<li>չորացման թմբուկի ջերմաստիճանի վերահսկման համակարգով,*</li>
<li>փոշու հավաքման հանգույցով,*</li>
</ul></li>
</ul>
</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | - առանց վնասվածքների ամբողջական մաղերով,*<br>- բիտումի բաքերով, առնվազն 100մ3 ծավալով,*<br>- հանքային փոշու բունկերով,*<br>- պոլիմերային հավելանյութերի ավտոմատ տրման հանգույցներով (առնվազն երկու հանգույց),*<br>- հագեցված բիտումի և լցանյութերի փորձարկման լաբորատորիայով, *<br>- բիտումի, լցանյութերի և մեքենաների կշեռքներով, *<br>- բոլոր կշեռքների 2025-2026թ. ստուգաչափման վկայականներով (մրցույթի և նախատեսվող աշխատանքների ընթացքում գործող), այդ թվում բեռնատարների կշռման կշեռքները։<br>- **բետոնի արտադրման հանգույց, 1միավոր**<br>  - ոչ պակաս 120մ3/ժ արտադրողականությամբ,<br>  - արտադրման տարեթիվը, առնվազն 2015թ.,<br>  - ամբողջական ավտոմատացված, արտադրության բոլոր փուլերը և հսկվող ցուցանիշները համակարգչի մոնիտորին ցուցադրման հնարավորությամբ,*<br>  - բոլոր կշեռքների 2025-2026թ. ստուգաչափման վկայականներով (մրցույթի և նախատեսվող աշխատանքների ընթացքում գործող), այդ թվում բեռնատարների կշռման կշեռքները։<br>- **ասֆալտտեղադրիչ, 1 միավոր, որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար (+1միավոր ռեզերվային, որը անմիջապես կարող է փոխարինել հիմնական մեխանիզմին)**<br>  - փռման լայնությունը 3-6մ,*<br>  - փռվող շերտի հաստությունը 3-30սմ հաստությամբ,*<br>  - արտադրողականությունը 500-700տ/ժ,*<br>  - թրթուռային,*<br>  - արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ.,<br>  - մեխանիզմի նիվելիրացման համակարգով (ավտոմատացված և մեխանիկական), փռվող շերտի բարձրության կարգավորման ուլտրաձայնային բազմաճառագայթային տվիչներով,*<br>  - աշխատանքային արագությունը (2-20)մ/րոպե, տեղաշարժման |

| | | |
|---|---|---|
| | | արագությունը 4-5կմ/ժ,*<br>- աշխատանքային մասը պետք է ունենա առնվազն 1 վիբրացիայի սարքավորում, խտացնող չորսու, հարթեցնող սալի տաքացնող մեխանիզմով,*<br>- 10-13տ հիդրավլիկ սարքավորմամբ բունկերով, հազեցած տատանվող սեղմող գլանակներով,*<br>- շնեկերի քանակը – 2հատ*<br>- կոնվեյերների քանակը – 2հատ*<br>- հազեցած շնեկերի և կոնվեյերների անընդհատ հսկման և համաչափ կառավարման համակարգերով,*<br>- շնեկի բարձրության կարգավորման համակարգով և 350-400մմ շնեկի թիակների տրամագծով,*<br>- մեխանիզմի անսարքությունների և խնդիրների հսկման համակարգով,*<br>- **Ճանապարհային վակումային մեքենա-փոշեկուլ, 1միավոր**<br>- աշխատանքային արագությունը՝ 5-20կմ/ժ*<br>- բունկերի ծավալը՝ 6մ3*<br>- ջրի բաքը՝ 1,5-2մ3*<br>- ավլելու լայնությունը՝ 3-4մ*<br>- ետնամասից լրացուցիչ վակուումային փոշեկուլի առկայություն*<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ․,<br>- **Ճանապարհային ֆռեզ, 1 միավոր, որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար**<br>- արտադրման տարեթիվը, առնվազն 2015թ<br>- մեխանիզմի նիվելիրացման համակարգով (ավտոմատացված և մեխանիկական), ֆռեզվող շերտի բարձրության կարգավորման ուլտրաձայնային բազմաճառագայթային տվիչներով,*<br>- աշխատանքային լայնությունը՝ 2մ,<br>- ֆռեզման խորությունը՝ մինչև 300մմ*<br>- աշխատանքային արագությունը՝ ոչ պակաս 15մ/րոպե*<br>- **գլդոններ,**<br>• *գրունտային գլդոններ, 1 միավոր հարթ, որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար* |

| | | |
|---|---|---|
| | | - աշխատանքային քաշը՝ 18-25տ, երկաստիճան վիբրացիոն մեխանիզմով,<br>- աշխատանքային լայնությունը առնվազն 1․8մ<br>- ջուր ցողելու համակարգով հագեցած,*<br>- մեխանիզմի ֆունկցիաների հսկման համակարգով,*<br>- խտացման աստիճանի հսկման համակարգով,*<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ․,<br>• *հարթ գլանային գլդոններ, 5 միավոր*<br>- աշխատանքային քաշը՝ 1-3տ, վիբրացիոն կամ օսիլյացիոն մեխանիզմով՝ 2 միավոր, որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար;<br>- աշխատանքային քաշը՝ 7-10տ, վիբրացիոն մեխանիզմով ՝ 1 միավոր, որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար;<br>- աշխատանքային քաշը՝ 11-18տ, վիբրացիոն մեխանիզմով՝ 1միավոր և օսիլյացիոն մեխանիզմով՝ 1 միավոր, որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար;<br>- ջուր ցողելու համակարգով հագեցած,*<br>- մեխանիզմի ֆունկցիաների հսկման համակարգով,*<br>- խտացման աստիճանի հսկման համակարգով,*<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ.,<br>• *պնևմատիկ անիվներով գլդոն, 1 միավոր, որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար*<br>- աշխատանքային քաշը՝ առնվազն 18-24տ,<br>- ջուր ցողելու համակարգով հագեցած,*<br>- մեխանիզմի ֆունկցիաների հսկման համակարգով,*<br>- խտացման աստիճանի հսկման համակարգով,*<br>- անիվների քանակը՝ առնվազն 4 անիվ առջևից, 4 անիվ հետնամասից,*<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ.,<br>- **ինքնաթափեր, 10 միավոր**<br>- բեռնատարողությունը՝ ոչ պակաս 25տ;<br>- ջերմամեկուսիչ թափքով կամ թափքի տաքացման համակարգով,*<br>- թափքի ջերմադիմացկուն ծածկոցով,*<br>- **բետոնախառնիչ մեքենա, 6 միավոր** |

| | | |
|---|---|---|
| | | - 6-8մ³ ծավալի խառնիչով,*<br>- **ունիվերսալ ամբարձիչ (շերեփով, ավլող սարքավորումով, ֆռեզող սարքավորումով), 4 միավոր որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար**<br>- շերեփի տարողությունը, առնվազն 0,25-0,5մ³<br>- ավլող սարքավորմամբ,*<br>- ֆռեզող սարքավորմամբ,*<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ.,<br>- **էքսկավատոր, 1 միավոր, այդ թվում հետահար մուրճով**<br>- քաշը՝ 20-30տ,<br>- շերեփի տարողությունը՝ 1մ3,<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ.,<br>- **էքսկավատոր-ամբարձիչ, 4 միավոր, այդ թվում հետահար մուրճով որը նախատեսված լինի օ/կ աշխատանքների համար**<br>- շերեփի տարողությունը՝ 0,2-0,3մ³<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ.,<br>- **ավտոգրեյդեր, 1 միավոր**<br>- դիմացի շերեփի լայնությունը՝ առնվազն 3մ,*<br>- համակարգչում 3D համակարգի տեղադրման հնարավորությամբ,*<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ.,<br>- **կոմպրեսորային կայանք, 2 միավոր**<br>- մեքենային կցորդվող կամ ինքնագնաց,*<br>- ճնշումը՝ առնվազն 150ԿՊա,*<br>- արտադրողականությունը՝ առնվազն 3000լ/րոպե,*<br>- **վերամբարձ կռունկ, 2 միավոր**<br>- սլաքի երկարությունը՝ 15-25մ*,<br>- բեռնատարողությունը՝ 10-15տ*,<br>- **ավտոմատացված համակարգով բիտում բաշխող մեքենա, 1միավոր**<br>- աշխատանքային լայնությունը 3-6մ, բաշխման ծավալը 0.25-1լ/մ²,*<br>- արտադրման տարեթիվը՝ առնվազն 2015թ.,<br>- **ձեռքի վիբրոսալ կամ վիբրոխտացուցիչ, 4 միավոր;**<br>- աշխատանքային լայնությունը՝ 400մմ* |

| | | |
|---|---|---|
| | | - աշխատանքային արագությունը՝ ոչ պակաս 5մ/ր*<br>- ասֆալտբետոն կտրող սարք, 1 միավոր<br>- մակնիշավորման մեքենա, 1 միավոր,<br>- մակնիշավորման լայնությունը՝ 100-300մմ,<br>- արտադրողականությունը՝ 7,5-9լ/րոպե,*<br>- թվային տախեոմետր, 1միավոր<br>- ճշտությունը՝ առնվազն 2΄΄,*<br>- GPS կայան և ռովեր, 1միավոր<br>- *Բոլոր մեքենա-մեխանիզմները և սարքավորումները պետք է լինեն սարքին վիճակում և ունենան դրանց տեխնիկական վիճակը հավաստող փաստաթղթեր:*<br>- *Բոլոր մեքենա-մեխանիզմները պետք է համալրված լինեն դեղին կամ նարնջագույն առկայծող լուսափարոսիներով:*<br>- *Արգելվում է տեխնիկական պատճառով մեքենա-մեխանիզմների 1 օրից ավելի պարապուրդը:*<br>- *Մեքենա-մեխանիզմների սեփականության իրավունքով տիրապետումը կդիտարկվի որպես առավելություն, հավասար գնառաջարկի դեպքում:*<br>- *Ցանկում ՛՛*՛՛ մականշմամբ տողերը կճշտվեն առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի տվյալները ստուգելիս:*<br>- *Վերը նշված ցանկի մեքենա-մեխանիզմների ներկայությունը շին . հրապարակում աշխատանքների ողջ ընթացքում պարտադիր է:*<br>*Սույն մասով սահմանված որակավորման չափանիշները հավաստելու նպատակով, Մասնակիցը իր հայտին կից ներկայացնում է բոլոր մեխանիզմների, մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկը կամ վարձակալության պայմանագրերը: Ներկայացվող մեքենա-մեխանիզմների ցանկերին և վարձակալության պայմանագրերին անհրաժեշտ է կցել սեփականության վկայագրերը կամ սեփականությունը հավաստող այլ փաստաթուղթ:*<br>*Ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն հայերեն, այլ լեզուների դեպքում ներկայացվեն հայերեն թարգմանությամբ՝ լիցենզավորված թարգմանչի համապատասխան վավերացմամբ:* |

| | | |
|---|---|---|
| 4 | ֆինանսական միջոցներ. | «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի հավաստման նպատակով մասնակիցը ներկայացնում է ստորև թվարկված փաստաթղթերը:<br>1. Ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ իր բանկային հաշվից քաղվածք (նվազագույնը՝ նախորդող 1 (մեկ) ամսվա համար) ,<br>2. ֆինանսական միջոցների առկայությունը հիմնավորող վարկային պայմանագիր կնքված բանկի կամ վարկային կազմակերպության հետ (Եթե առկա է),<br>3. հայտարարություն առ այն, որ մասնակցի ֆինանսական միջոցները բավարարում են սույն հրավերով սահմանված գնման ենթակա ապրանքի (աշխատանքի, ծառայության) ողջ ծավալով և ժամանակին մատակարարման համար:<br>Մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի կնքման առաջարկություն ստացած մասնակիցը պարտավոր է Հանձնաժողովին ներկայացնել սույն մասով նախատեսված հայտարարությունը հիմնավորող փաստաթղթերը: Որպես նման փաստաթուղթ, մասնակիցը ներկայացնում է բանկային հաշվից քաղվածք: |
| 5 | Աշխատանքային ռեսուրսներ | Աշխատանքների իրականացման ողջ ընթացքում աշխղեկը, տեղամասի պետը և գեոդեզիստը պետք է ներկա լինեն շին. հրապարակում:<br>Շին. հրապարակում կապալառուի աշխատող բոլոր աշխատակիցները պետք է ունենան աշխատանքային փորձ և ըստ աշխատանքների տեսակի համապատասխան որակավորման անհրաժեշտ փաստաթղթեր՝<br>- գլխավոր ինժեներ՝ 5 տարվա ընդհանուր աշխատանքային փորձ, 1մասնագետ<br>- տեղամասի պետ՝ առնվազն 3 տարվա ընդհանուր աշխատանքային փորձ, 1մասնագետ<br>- աշխղեկ՝ առնվազն 2 տարվա ընդհանուր աշխատանքային փորձ, 1 մասնագետ<br>- գեոդեզիստ՝ 3 տարվա ընդհանուր աշխատանքային փորձ, 1 մասնագետ<br>- մեխանիզատորներ՝ առնվազն 2 տարվա ընդհանուր աշխատանքային փորձ, 15 մասնագետ:<br>• Սույն որակավորման չափանիշների հավաստման նպատակով Մասնակիցը ներկայացնում է հայտարարություն պահանջներին համապատասխանության մասին:<br>*Մրցույթում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը մինչև պայմանագրի կնքումը,* |

| | | |
|---|---|---|
| | | *ներկայացնում է աշխատակիցների թվաքանակը հիմնավորող տեղեկանք ՊԵԿ-ից:* |
| 6 | **Երաշխիք** | Երաշխիքային ժամկետ է սահմանվում Կապալառուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն կատարելուց հետո շահագործման հանձնման Ակտի ստորագրման օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: |
| 7 | **Ուսուցում** | Հաղթող ճանաչված մասնակիցը պետք է անցնի ԱՄՕ-ի կողմից պահանջվող բոլոր անհրաժեշտ հրահանգավորումները: |
| 8 | **Կատարման վերջնաժամկետ կամ Տևողություն** | Աշխատանքների նախատեսված տևողությունը՝ 100 օրացուցային օր, օգոստոս-դեկտեմբեր ամիսներ: |

## Բաժին 3. Մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը

| Մաս N | Մասնակցության իրավունքի տեսակը | |
|---|---|---|
| 1 | Սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ տեղեկատվություն | 1. Սույն մասով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատվում է հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ, և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների |

| | | |
|---|---|---|
| | | ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ.<br>2. Մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի կնքման առաջարկություն ստացած մասնակիցը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել սույն մասով նախատեսված հայտարարությունը հիմնավորող փաստաթղթերը: Որպես նման փաստաթուղթ, մասնակիցը ներկայացնում է ՀՀ դատական դեպարտամենտից տրված տեղեկանքն առ այն, որ տվյալ մասնակիցը չի գտնվում անվճարունակության, սնանկության կամ լուծարման գործընթացներում, կամ, եթե մասնակիցը օտարերկրյա կազմակերպություն է, համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանքն առ այն, որ տվյալ մասնակիցը չի գտնվում անվճարունակության, սնանկության կամ լուծարման գործընթացներում: Տեղեկանքն պետք է թարգմանված լինի անգլերեն, վավերացվի նոտարի կողմից, ինչպես նաև վավերացվի ապոստիլով (եթե ապոստիլի մասին կոնվենցիայի համաձայն ՀՀ-ն պահանջում է փաստաթղթերի ապոստիլով վավերացում տվյալ երկրից՝ փաստաթղթի իսկությունը ճանաչելու նպատակով): |
| 2 | Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկատվություն | 1. Սույն մասով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատելիս հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ հայտարարությունը Գնումները համակարգողը ստուգում է նշված տեղեկությունը www.gnumner.am կայքում, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի՝ «Հաղթողին որոշելու» նիստում հայտարարում է Մասնակցի ներկայացրած տեղեկատվության հավաստիության կամ անհավաստիության վերաբերյալ:<br>2. Եթե Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս զրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունքից: |
| 3 | Գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին տեղեկատվություն | 1. Մասնակիցն իր հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին:<br>2. Եթե գնման գործընթացի ընթացքում մինչև պայմանագրի կնքումը պարզվում է, որ Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս զրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության և պայմանագիր կնքելու իրավունքից: |

| | | |
|---|---|---|
| 4. | Հիմնադիր փաստաքղթեր | Մասնակիցը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերի պատճենները.<br><br>1. Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք (առնվազն նախորդ ամսվա դրությամբ) կամ օտարերկրյա անձի դեպքում՝ իրավաբանական անձի գրանցումը հաստատող համապատասխան այլ փաստաթղթի պատճենը,<br><br>2. Կանոնադրության և դրա բոլոր փոփոխությունների պատճեններ<br><br>Օտարերկրյա իրավաբանական անձի դեպքում սույն մասում պահանջվող փասթաթղթերի պատճենները պետք է թարգմանված լինեն անգլերեն, վավերացվեն նոտարի կողմից, ինչպես նաև վավերացվեն ապոստիլով (եթե ապոստիլի մասին կոնվենցիայի համաձայն ՀՀ-ն պահանջում է փաստաթղթերի ապոստիլով վավերացում տվյալ երկրից՝ փաստաթղթերի իսկությունը ճանաչելու նպատակով): |
| 5 | Ֆինանսա-իրավական ուսումնասիրություն (Due Diligence) | Մինչև պայմանագրի կնքումը առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով անցնել ֆինանսա-իրավական ուսումնասիրություն և լրացնել համապատասխան հարցաշար, որը կներկայացվի տվյալ մասնակցին լրացուցիչ: |

## Բաժին 4. Հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը.

1. Հայտերը բացվում են ԱՄՕ-ի հետևյալ հասցեում՝ Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, Տերմինալ 4 շենքում գտնվող Ժամանման սրահի, Նիստերի դահլիճ՝ 2026թ.-ի Յուլիսի 28-ին, ժամը 15:00-ին: Մասնակիցները Հայտերի բացման նիստին մասնակցելու համար պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով և լիազորությունները հավաստող փաստաթղթով: Միանձնյա գործադիր մարմնի (տնօրեն, գլխավոր տնօրեն և այլն) անձամբ մասնակցության դեպքում ներկայացվում է անձնագիր և պետական ռեգիստրի վկայականի համապատասխան ներդիրը, որով հավաստվում է տվյալ անձի միանձնյա գործադիր մարմին նշանակված լինելու հանգամանքը, իսկ լիազորված անձի դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի կողմից պատշաճ կերպով տրված լիազորագիր:
2. Հայտերի բացման նիստում, ըստ գրանցման հերթականության Հանձնաժողովի կողմից բացվում են մասնակիցների կողմից ներկայացված ծրարները և հրապարակվում են ներկայացված փաստաթղթերը, որից հետո հայտարարվում է ընդմիջում հանձնաժողովի կողմից որոշված ժամանակահատվածով:

## Բաժին 5. Հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը.

1. Հայտերի փաստաթղթային տարբերակով ներկայացման վերջնաժամկետն է 2026թ.-ի Յուլիսի 27-ը, ժամը 18:00-ն:
2. Հայտերը ներկայացվում են հայերեն լեզվով:
3. Հայտերը ներկայացվում են փաստաթղթային ձևով: Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կնքելու պայմանը կիրառելի է տվյալ մասնակցի համար) մասնակցի կողմից: Ձև 5-ով նախատեսված լրացված գնային առաջարկները դրվում փաստաթղթերի ընդհանուր փաթեթի մեջ առանձին փակ կնքված և ստորագրված ծրարով:
4. Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից:
5. Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են "բնօրինակ" և "պատճեն" բառերը:
6. Ծրարը և Հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակցի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ):
7. Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս՝ լիազորությունը հավաստող փաստաթուղթը (լիազորագիրը):
8. Ծրարի վրա հայերեն լեզվով նշվում են՝
   - ա) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն),
   - բ) մրցույթի ընթացակարգի ծածկագիրը,
   - գ) "չբացել մինչև հայտերի բացման նիստը" բառերը,
   - դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը, հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն (եթե մասնակիցն ունի էլեկտրոնային փոստի հասցե):
9. Հայտերը համակարգողի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին վերջինիս տրվում է տեղեկանք:
10. Հայտերը վավերական են մինչև պայմանագրի կնքումը:

## Բաժին 6. Եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա դրա պայմանները և կարգը.

| /ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ/ |
|---|

## Բաժին 7. Հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը: Նշում այն մասին, որ առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով.

1. Առաջարկվող գինը ապրանքի, աշխատանքի և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի և այլ վճարումների գծով մասնակցի կողմից կատարված ծախսերը:
2. Մասնակիցը ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի գնային հաշվարկ, որում հստակ նշվում է ավելացված արժեքի հարկը: Մասնակցի կողմից ներկայացված գինը չի կարող պակաս լինել ապրանքների ինքնարժեքից, որի հաշվարկը ներկայացվում է հանձնաժողովի պահանջով:
3. Եթե միաժամանակյա բանակցությունների արդյունքում Մասնակիցը ներկայացնում է նոր գնային առաջարկ, որն ավելի ցածր է քան սկզբնական գնային առաջարկը Մասնակիցը` առաջին տեղը զբաղեցնելու դեպքում` հանձնաժողովի պահանջով, մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է նոր գնային առաջարկի հաշվարկը: Եթե Մասնակիցն իր կողմից միաժամանակյա բանակցությունների ընթացքում ներկայացված նոր գինը չի կարողանում հավաստել և ներկայացված գնի նոր հաշվարկը Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքում գնահատվում է անարժանահավատ, ապա հանձնաժողովը նշված մասնակցին համարում է չորակավորված, ինչի արդյունքում կիրառվում են սույն Հրավերով սահմանված ընթացակարգերը:

## Բաժին 8. Հայտի և պայմանագրի կատարման ապահովմանը վերաբերող պահանջները.

Մասնակիցը հաղթող ճանաչվելու դեպքում, նախքան պայմանագրի կնքումը պետք է ներկայացնի անհետկանչելի բանկային երաշխիք կնքվող պայմանագրի ընդհանուր գումարի 5% (հինգ տոկոսի) չափով, որն ուժի մեջ կլինի մինչև պայմանագրով նախատեսված վերակառուցման աշխատանքների հանձնման-ընդունման ակտի ստորագրումը, և որի վճարման պահանջ կներկայացվի ԱՄՕ-ի կողմից այն թողարկող բանկին վերակառուցման աշխատանքները պայմանագրով սահմանված ժամկետում պատշաճ կերպով չկատարելու դեպքում:

## Բաժին 9. Հայտը մերժելու հիմքերը.

Մասնակցի ներկայացրած հայտը մերժվում է, եթե այն օբյեկտիվ որևէ չափանիշով չի համապատասխանում Հրավերի պահանջներին, մասնակցի կողմից չեն ներկայացվել սույն հրավերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները կամ մասնակցի ներկայացրած հայտն այլ կերպով չի համապատասխանում սույն հրավերի պահանջներին:

## Բաժին 10. Հայտերի գնահատման և հաղթողի ընտրության կարգը

1. Ծրարների բացման և դրանցում առկա փաստաթղթերի հրապարակումից հետո հանձնաժողովը հայտարարում է ընդմիջում՝ ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով: Ընդմիջման ժամկետը՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման գործընթացի ժամանակատարությունից կախված հանձնաժողովի կողմից կարող է սահմանվել մինչև 5 աշխատանքային օր:
2. Ընդմիջում հայտարարելիս մասնակիցները հանձնաժողովի կողմից տեղեկացվում են, որ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի հաջորդ նիստի ընթացքում ոչ գնային չափանիշներին բավարարած մասնակիցների միջև անցկացվելու են միաժամանակյա բանակցություններ՝ ներկայացված գնային առաջարկների սակարկման նպատակով:
3. Ընդմիջումը հայտարարվելուց հետո հանձնաժողովի անդամները ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերը և գնահատում են ոչ գնային առաջարկները: Ոչ գնային առաջարկները (որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքը, տեխնիկական բնութագրերը և այլն) գնահատելիս հանձնաժողովը կայացնում է որոշում նշված ոչ գնային առաջարկները հրավերի պայմաններին բավարարելու կամ չբավարարելու վերաբերյալ: Եթե որևէ մասնակցի ներկայացրած հայտը չի համապատասխանում Հրավերի ոչ գնային չափանիշներին, ապա Հանձնաժողովի արձանագրության մեջ նշվում են չբավարարելու համար հիմք հանդիսացած փաստերը:
4. Հրավերով սահմանված ոչ գնային չափանիշները գնահատվում են հետևյալ կարգով՝
   ա) «Գնման ընթացակարգին մասնակցության իրավունք» ոչ գնային չափանիշը գնահատվում է հիմք ընդունելով Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ, և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ.
   բ) «Որակավորման չափանիշներ» ոչ գնային չափանիշի գնահատման դեպքում գնման գործընթացի արձանագրությունում նշվում են այն մասնակիցները, որոնց որակավորման չափանիշները ըստ ներկայացված փաստաթղթերի չեն համապատասխանում հրավերով սահմանված որակավորման չափանիշներին.
   Սույն կետի «ա» ենթակետով նախատեսված մասնակցության իրավունքի չափանիշը գնահատելիս հիմք ընդունելով Մասնակցի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ հայտարարությունը՝ Գնումները համակարգողը ստուգում է նշված տեղեկությունը www.gnumner.am կայքում, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի՝ «Հաղթողին որոշելու» նիստում հայտարարություն է կատարվում Մասնակցի ներկայացրած տեղեկատվության հավաստիության կամ ոչ հավաստիության վերաբերյալ: Եթե Մասնակիցը ներկայացրել է սույն կետով նախատեսված պահանջի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա Մասնակիցն անմիջապես հայտարարվում է չորակավորված և վերջինս զրկվում է գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունքից:

5. Հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստը մրցույթի բանակցությունների նիստն է: Նշված նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամների երկու երրորդը:
6. Հանձնաժողովի նախագահը (նրան փոխարինող անձը) հայտարարում է հայտերի գնահատման արդյունքները և նիստին ներկա մասնակիցներին հայտնում է, թե որ մասնակցի ներկայացրած ոչ գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, որի արդյունքում նշված մասնակիցը համարվում է չորակավորված:
7. Հանձնաժողովն իրավունք ունի մասնակցից պարզաբանում պահանջել ներկայացված հայտում առկա դրույթների անճշտությունների վերաբերյալ: Նշված դեպքում, եթե մասնակցի ներկայացրած բացատրությունը հնարավորություն է ընձեռում պարզաբանում մտցնել հայտում առկա դրույթի վերաբերյալ, ապա Հանձնաժողովը հիմք ընդունելով նշված պարզաբանումը մասնակցին համարում է որակավորված: Հակառակ դեպքում արձանագրվում է, որ մասնակցի ներկայացրած հայտում առկա ոչ գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:
8. Եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ տառերով և թվերով գրված տվյալների միջև, ապա Հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվում տառերով գրվածը:
9. Հանձնաժողովի նախագահը (նրան փոխարինող անձը) ոչ գնային պահանջներին համապատասխանող բոլոր մասնակիցներին (հանձնաժողովի նիստին ներկա մասնակիցներին) կրկին պարզաբանում է միաժամանակյա բանակցությունների անցկացման ընթացակարգը և Հանձնաժողովի համակարգողին առաջարկում է մասնակիցներին տրամադրել բանակցությունների թերթիկները:
10. Հանձնաժողովի նախագահը ֆիքսում է բանակցությունների ժամանակը, որը սահմանվում է 15 րոպեից մինչև մեկ ժամ՝ կախված գնային առաջարկների ներկայացման ժամանակատարությունից: Բանակցությունների ժամանակահատվածը ֆիքսելուց Հանձնաժողովը կարող է հաշվի առնել նաև մրցույթի մասնակիցների առաջարկները:
11. Բանակցությունների անցկացման ժամանակահատվածը ֆիքսելուց հետո մասնակիցները բանակցությունների թերթիկում (թերթիկի ձևաթուղթը կցված է սույն հավելվածին) լրացնում են իրենց կողմից առաջարկվող նոր գինը (եթե այդպիսին առաջարկվում է մասնակցի կողմից):
12. Հանձնաժողովի նախագահը մասնակիցների կողմից լրացված բանակցությունների թերթիկները միաժամանակ հավաքում է, որից հետո հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի այլ անդամը հայտարարում են մասնակիցների անունները (անվանումները) ու նրանց կողմից առաջարկվող նոր գները:
13. Մասնակիցների կողմից առաջարկված նոր գները հայտարարելուց հետո Հանձնաժողովի նախագահը բանակցությունների թերթիկները կրկին բաժանում է մասնակիցներին՝ առաջարկելով կրկին ներկայացնել նոր գնային առաջարկ:
14. Վերը նշված միաժամանակյա բանակցությունների գործընթացը շարունակվում է մինչև սահմանված բանակցությունների ժամանակահատվածի ավարտը:
15. Բանակցությունների ժամանակահատվածի ավարտից հետո Հանձնաժողովի նախագահը միաժամանակ հավաքում է բանակցությունների թերթիկները, հայտարարում է վերջնական գները, որից հետո հայտարարում է ընդմիջում՝ մրցույթի առաջին տեղը զբաղեցրած մասնակցին հայտարարելու նպատակով: Ընդմիջումից հետո Հանձնաժողովի նախագահը հայտարարում է միցույթի առաջին տեղը զբաղեցրած մասնակցին և պարզաբանում, որ նիստի արձանագրությունը մասնակիցները կարող են ստանալ Հանձնաժողովի համակարգողից:
16. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) հավասար վերջնական գնային առաջարկների դեպքում` ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարից ամենաբարձրին նախապատվություն տալու սկզբունքով: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ:

17. Եթե Մրցույթի արդյունքներով լավագույն գնային առաջարկը ներկայացրած մասնակցի գնային առաջարկները, այդուհանդերձ, ավելի բարձր են քան նախապես նախատեսվել էր ԱՄՕ-ի կողմից, կամ, եթե ԱՄՕ-ի կողմից նախապես կատարված ուսումնասիրությունների համաձայն մրցույթի արդյունքում առաջարկվող գները բարձր են շուկայում առկա գներից (առկա է հնարավորություն գնման առարկան ձեռք բերել ավելի էժան գներով), ապա գնահատող հանձնաժողովը կարող է առաջարկել մրցույթի արդյունքներով լավագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին փոփոխել իր կողմից ներկայացրած վերջնական գինը և պայմանագիրը կնքել շուկայում առկա խելամիտ գնով (ԱՄՕ-ի ուսումնասիրության արդյունքում խելամիտ, ընդունելի և առկա գնով): Եթե մրցույթի արդյունքներով լավագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը չի համաձայնվում Հանձնաժողովի առաջարկին, ապա Հանձնաժողովի պատճառաբանված առաջարկության հիման վրա Ընկերության ղեկավարը մրցույթը հայտարարում է չեղյալ:

18. Հանձնաժողովի նախագահը առաջին տեղը զբաղեցրած մասնակցին տեղեկացնում է այն մասին, որ մինչև պայմանագրի կնքումը նա պարտավոր է անցնել ֆինանսա-իրավական ուսումնասիրություն և լրացնել համապատասխան հարցաշար, որը կտրամադրվի Հանձնաժողովի կողմից: Պայմանագիրը կկնքվի միայն այն դեպքում, եթե ԱՄՕ-ի կողմից ուսումնասիրության արդյունքում տրվի բավարար եզրակացություն:

19. Մրցույթի հաղթողին հայտարարելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը տրամադրվում է մրցույթի բոլոր մասնակիցներին` վերջիններիս պահանջով: Մրցույթի հաղթողին հայտարարելու վերաբերյալ ընդմիջման ժամկետը չի կարող գերազանցել 5 աշխատանքային օրը, որը սահմանվում է Հանձնաժողովի վերջնական (մրցույթի հաղթողին հայտարարելու) արձանագրությունը կազմելու համար:

## Բաժին 11. Գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը, տեղեկություններ մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին, ինչպես նաև գնումները համակարգողի անունը և ազգանունը.

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում:
2. Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:
3. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է ԱՄՕ-ի ինտերնետային կայքում ` հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած

մասնակցի տվյալները:

4. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից.
5. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ:
6. Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում ԱՄՕ-ի ինտերնետային կայքում:
7. Փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Փոփոխությունների կատարման դեպքում, եթե տվյալ գնման գործընթացի համար սահմանվել է հայտերի ապահովման պահանջ, ապա մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:
8. Պարզաբանում և հրավերում փոփոխություններ կատարելու գործողությունների արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:
9. **Հարցումները և պարզաբանումները ընդունվում և արձակվում են  են միայն գրավոր տեսքով /gusargsyan@aia-zvartnots.aero/**:
10. Գնահատող Հանձնաժողովի գնումները համակարգողն է Գուրգեն Սարգսյանը /+37498208279/:

## Բաժին 12. Օրենքի և իրավական այլ ակտերի դրույթներին կատարված հղումները.

1. Սույն հրավերը կազմվել է և գնման գործընթացն իրականացվում է ԱՄՕ-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգով սահմանված կանոններով և ընթացակարգերով:
2. ԱՄՕ-ն հանդիսանալով հանրային ծառայություններ մատուցող ընկերություն իր կարիքների համար գնումներն իրականացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 52-րդ  հոդվածներով սահմանված նորմերին համապատասխան՝ ԱՄՕ-ի Տնօրենի 23.01.2024 թիվ 01/24/-L հրամանով հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգով:

## Բաժին 13. Պայմանագիր կնքելու առաջարկը ներկայացնելու պայմանները և պայմանագիր կնքելու կարգը.

1. Եթե մասնակիցներն իրենց որակավորման չափանիշների և մասնակցության իրավունքի հավաստման վերաբերյալ հայտով ներկայացրել են հայտարարություններ, ապա Հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջում է նշված հայտարարությունները հիմնավորող սույն հրավերով սահմանված փաստաթղթերը ներկայացնել 5 աշխատանքյին օրում օրում, որոնց ուսումնասիրության արդյունքում որոշում է կայացվում մասնակցի որակավորման և այլ չափանիշների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ և իրականացվում են Գնումների կարգով ու սույն հրավերով սահմանված գործընթացները:
2. Հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակցից սույն Հրավերի համաձայն բոլոր պահանջվող փաստաթղթերը ստանալուց հետո և հանձնաժողովի կողմից որակավորման և այլ չափանիշների համապատասխանության վերաբերյալ որորշում կայացնելու դեպքում, 10-օրյա ժամկետում ԱՄՕ-ն ուղարկում է պայմանագրի նախագիծը:
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրել պայմանագրի նախագիծը և ներկայացնել իր դիտողություններն ու առաջարկները (առկայության դեպքում):
4. Ներկայացված դիտողությունների և/կամ առաջարկների վերաբերյալ փոխադարձ համաձայնություն ձեռք բերելու դեպքում ըստ անհրաժեշտության պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո ԱՄՕ-ի և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի միջև կնքվում է պայմանագիր:
5. Պայմանագիրը կնքելուց հետո, դրա գործողության ընթացքում, եթե ԱՄՕ-ն շուկայում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզում է, որ շուկայում առկա են այլ Կատարողի կողմից առաջարկվող նույն ապրանքների  համար առաջարկվող ավելի էժան գներ, ապա ԱՄՕ-ն հաղթողին առաջարկում է համապատասխան չափով իջեցնել ապրանքների գները: Եթե հաղթողը համաձայնվում է համապատասխան չափով իջեցնել նշված գները, ապա պայմանագրում կատարվում են համապատասխան փոփոխություններ: Հակառակ դեպքում, եթե Կատարողը չի համաձայնվում գների իջեցման վերաբերյալ ԱՄՕ-ի առաջարկին, ապա ԱՄՕ-ն իրավունք է ստանում միակողմանիորեն լուծել պայմանագիրը՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: ԱՄՕ-ի կողմից պայմանագրի լուծման վերաբերյալ որոշումը կայացնելիս գնահատվում են պայմանագրի լուծման արդյունքում Ապչանքների չմատակարարման հետ կապված ռիսկերը:
6. Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հետ կնքվում է պայմանագիր և պայմանագրի գործողության ընթացքում պարզվում է, որ գնման գործընթացի ընթացքում մինչև պայմանագրի կնքումը Մասնակիցն իր հայտարարությամբ ներկայացրել է գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն, ապա  ԱՄՕ-ն իրավունք ունի լուծել պայմանագիրը և պահանջել վնասների հատուցում:
7. Պատվիրատուն առաջարկում է Մասնակցին վճարման հետևյալ պայմանները՝ կանխավճար 20% : Արժեքի հետագա մասնակի վճարումները կկատարվեն աշխատանքների փաստացի կատարված ծավալների հիման վրա: վճարումը կկատարվի կատարողական ակտի երկկողմանի հաստատման օրվա հաջորդ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում՝ նվազեցնելով տվյալ կատարողական ակտի գումարի 20%-ը մինչև վճարված կանխավճարի գումարը մարվի:

## Բաժին 14. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները (անգործությունը) և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը.

| |
|---|
| Գնումների գործընթացի վերաբերյալ բողոքների քննարկումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: |

## Բաժին 15. Հայտի նախապատրաստման, ներկայացման, բացման և գնահատման, ինչպես նաև գնումների վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

| |
|---|
| Սույն հրավերով նշված տեղեկություններից և փաստաթղթերից բացի այլ տեղեկատվություն ներկայացնելու պայմանը «ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ» : |

## Բաժին 16. Հայտերի պատրաստման հրահանգները.

ՀՐԱՀԱՆԳ

Մրցույթի հայտերի պատրաստման

1. Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին մրցույթի հայտը պատրաստելիս:
2. Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող` այլ ձևերով` պահպանելով պահանջվող վավերապայմանները:
3. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ԱՄՕ-ին ներկայացնել մրցույթի հայտ: Մրցույթի հայտը սույն հրավերով նախատեսված կարգով մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և ԱՄՕ-ին ներկայացված առաջարկն է (Ձև N 1), որին կցվում են Հրավերով և սույն հրահանգով պահանջվող փաստաթղթերը:
4. Մրցույթի հայտը (ներառվող բոլոր փաստաթղթերը) պետք է կազմված լինի հայերեն կամ անգլերեն լեզվով:
5. Մասնակիցը որակավորման իր չափանիշները հավաստելու համար Ձև 2-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է Հրավերի 2-րդ բաժնով սահմանված որակավորման չափանիշների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը և տեղեկությունները` սույն հրահանգին կից Ձև 2-ով սահմանված ձևաչափով:
6. Մասնակիցն իր մասնակցության իրավունքը հավաստելու համար Ձև 3-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնով սահմանված մասնակցության իրավունքի չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը և տեղեկությունները` սույն հրահանգին կից Ձև 3-ով սահմանված ձևաչափով:
7. Մասնակիցը Ձև 4-ով նախատեսված առաջարկին կից ներկայացնում է պայմանագրի ապահովման միջոցներ` համաձայն հրավերի

8-րդ բաժնով սահմանված պայմանների: Հայտի և պայմանագրի ապահովման միջոցները ներկայացվում են սույն հրահանգով սահմանված ձևաչափով:

8. Մասնակիցը մրցույթի հայտը ներկայացնում է սույն Հրավերով սահմանված կարգով:
9. Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից, ինչպես նաև Հրավերով սահմանված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե մրցույթի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:
10. Ձև 5-ով նախատեսված լրացված գնային առաջարկները դրվում փատաթղթերի ընդհանուր փաթեթի մեջ առանձին փակ կնքված և ստորագրված ծրարով:
11. Սույն հրահանգի 9-րդ կետում նշված ծրարի վրա մրցույթի հայտը կազմելու լեզվով նշվում են՝

    ա) պատվիրատուի անվանումը և մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).

    բ) մրցույթի ծածկագիրը.

    գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

    դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4.3 Սույն հրահանգի 9-րդ և 11-րդ կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

Ձև 1
*<u>ԱՄՕ-ՁՕՂՆԱ-67/26</u>*
*ծածկագրով մրցույթի հրավերի*

# Մ ր ց ու յ թ ի ն  մ ա ս ն ա կ ց ե լ ու  ա ռ ա ջ ա ր կ

________________________________________հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից ԱՄՕ-ՁՕՂՆԱ-67/26 ծածկագրով հայտարարված մրցույթին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է մրցույթի հայտը:

________________________________________հայտնում է նաև, որ ունի

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

գնման հրավերով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

Առդիր՝___________թերթ:

______________________________________________________________  _______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)  (ստորագրությունը)

Կ. Տ.

_________________________20… թ.

(ամսաթիվը, ամիսը)

Ձև 2
*<u>ԱՄՕ-ՁՕՂՆԱ-67/26</u>*
*ծածկագրով մրցույթի հրավերի*

# Որակավորման չափանիշներ

| Մաս N | Որակավորման չափանիշներ | Մասնակցի կողմից ներկայացվող տեղեկություններն ու փաստաթղթերի անվանումները |
|---|---|---|
| 1 | Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 1-ին մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 2 | Մասնագիտական փորձառություն | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 2-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 3 | Տեխնիկական միջոցներ | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 3-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 4 | ֆինանսական միջոցներ. | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 4-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 5 | Աշխատանքային ռեսուրսներ | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 5-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 6 | Երաշխիք | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 6-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 7 | Ուսուցում | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 7-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |
| 8 | Կատարման վերջնաժամկետ կամ Տևողություն | Մասնակիցը լրացնում է Հրավերի 2-րդ բաժնի 8-րդ մասում պահանջվող տեղեկությունները և սույն փաստաթղթին կցում է պահանջվող փաստաթղթերը |

Առդիր`___________թերթ:

_____________________________________________ ___________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ. ______________________20… թ. (ամսաթիվը, ամիսը)

Ձև 3
<u>*ԱՄՕ-ՃՕՂՆԱ-67/26*</u>
*ծածկագրով մրցույթի հրավերի*

# Մասնակցության հրավունք

| Սաս N | Մասնակցության իրավունքի տեսակը | Մասնակցի կողմից ներկայացվող տեղեկությունների ու փաստաթղթերի անվանումները |
|---|---|---|
| 1 | **Սնանկության, անվճարունակության կամ լուծարման գործընթացներում չգտնվելու վերաբերյալ տեղեկատվություն** | Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 1-ին մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները (եթե այդպիսիք պահանջվում են) |
| 2 | **Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկատվություն** | Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 2-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները (եթե այդպիսիք պահանջվում են) |
| 3 | **Գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին տեղեկատվություն** | Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 3-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները (եթե այդպիսիք պահանջվում են) |
| 4 | **Հիմնադիր փաստաթղթեր** | Մասնակիցը ներկայացնում է Հրավերի 3-րդ բաժնի 4-րդ մասով նախատեսված հայտարարությունը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները (եթե այդպիսիք պահանջվում են) |

Առդիր`___________թերթ:

_______________________________________________________________ _______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________20… թ

Ձև 4

*ԱՄՕ-ՋՕՂՆԱ-67/26*

*ծածկագրով մրցույթի հրավերի*

# Հայտի և/կամ պայմանագրի ապահովման միջոցներ

1. Մասնակիցը սույն Ձևի պահանջները ապահովելու նպատակով ներկայացնում է հայտարարություն առ այն, որ հաղթող ճանաչվելու դեպքում կապահովի սույն Հրավերի 8-րդ բաժնով սահմանված պայմանագրի ապահովման միջոցները:

Առդիր՝___________թերթ:

_______________________________________________ ________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________20… թ.

(ամսաթիվը, ամիսը)

Ձև 5
*ԱՄՕ-ՁՕՂՆԱ-67/26*
*ծածկագրով մրցույթի հրավերի*

Գնային առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ԱՄՕ-ՁՕՂՆԱ-67/26 ծածկագրով մրցույթի հրավերը,

______________________________________________________________________-ն

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է ներկայացված չափաբաժինների մասով պայմանագիրը կատարել համաձայն կից ներկայացված գնացուցակի:
Կից ներկայացնում ենք առաջարկվող գնի հաշվարկը հետևյալ ձևաչափով:

| | Նկարագիրը | Գնային առաջարկ | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| 1 | ՛՛Զվարթնոց՛՛ օդանավակայանի ղեկուղիների (A, B, C, D) ՛՛Կանգ՛՛ համակարգի , լուսատախտակների, առանցքագծերի խրամուղիների և դիտահորերի իրականացում, մալուխատարների անցկացում: | | |

__________________________________ ___________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը) Կ. Տ.

_____________________20…թ.

(ամսաթիվը, ամիսը)

**Այս գնային առաջարկը դրվում փաստաթղթերի ընդհանուր փաթեթի մեջ առանձին փակ կնքված և ստորագրված ծրարով:**